ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան
27.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2018/130

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 21.12.2018թ.ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն 21.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 30.11.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 118.000 ՀՀ դրամ:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի կողմից «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն 30.11.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 118.000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հայտնում ենք, որ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարման գծով:

Սակայն «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բացահայտվել է, որ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ

առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարի գծով:

«Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն 30.11.2018թ. դրությամբ հարկային մարմինի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշային վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

«ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

Դադարեցնել Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2018թ. թիվ 4 արձանագրությամբ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի կողմից լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

2. <u>«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը 21.12.2018թ. գրությամբ դիմել է «Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ին՝ խնդրելով Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՓԲԸ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2018/130 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 21.12.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր) Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 05.12.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 և 12.12.2018թ. ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, 30.11.2018թ. դրությամբ Ընկերության՝ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.12.2018թ. «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ին տրված թիվ 2987 տեղեկանքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.12.2018թ. տրված եզրակացությունը.

«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար՝ տպագիր նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21 ծածկագրով գնանշման հարցում, (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից առաջարկված գնային առաջարկը 5-րդ չափաբաժնի համար կազմել է 17.500 ՀՀ դրամ, 6-րդ չափաբաժնի համար՝ 27600 ՀՀ դրամ, 7-րդ չափաբաժնի համար՝ 14400 ՀՀ դրամ, 8-րդ չափաբաժնի համար՝ 37500 ՀՀ դրամ, 9-րդ չափաբաժնի համար՝ 52500 ՀՀ դրամ, 10-րդ չափաբաժնի համար՝ 1500 ՀՀ դրամ, 11-րդ չափաբաժնի համար՝ 3000 ՀՀ դրամ:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 05.12.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության.

- 3-րդ կետով որոշել է Ընթացակարգի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ին:

- 4-րդ կետով որոշել է հարցում ուղարկել ՀՀ պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.12.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 118.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 12.12.2018թ. ժամը 13:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության.

- 2-րդ կետով արձանագրել է, որ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.12.2018թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի է ժամկետանց հարկային պարտավորություն, ինը գերազանցում է Հրավերի 2-րդ մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված չափը:

- 3-րդ կետով հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը, որոշել է «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Բողոքի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ Թ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.12.2018թ. տրամադրած եզրակացության համաձայն՝ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (30.11.2018թ.) ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 118.000 ՀՀ դրամ գումարի չափով: Ընկերությայն ներկայացուցիչը հայտնեց նաև, որ արձանագրված ժամկետանց պարտավորությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.12.2018թ. «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ին տրված թիվ 2987 տեղեկանքի համաձայն, գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման

մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ հայտը ներակայացնելու օրվա (30.11.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, հետևաբար հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները և վստահ լինելով, որ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պարտավորություններ չունի, Ընկերությունը մասնակցության հայտ է ներկայացրել:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» 30.11.2018թ. դրությամբ քաղվածքը, որի համաձայն՝ Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 19.12.2018թ. «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ին տրված թիվ 2987տեղեկանքը, որի համաձայն արձանագրված պարտավորությունը դրոշմանիշային վճարների գծով է:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի

կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար՝ տպագիր նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ԹՀ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

• 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի

պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին սույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 11.12.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (30.11.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է 118.000 ՀՀ դրամ:

- «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշայինի վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (30.11.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (30.11.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի կողմից 21.12.2018թ ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ԹՀ17ՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-ՏՆ-18/21 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ 12.12.2018թ. թիվ 4 արձանագրությամբ «ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ